ւոյ , որպէս աւանդի 'ի ձեռագիրս , եւ 'ի պատմութեան Հ · Մ · Չամչեան · Հատ · Գ · Երես 665 ։

Տեսեալ Պատրիարքին Յունաց զայսպիսի յաջողուածս գործոց Եղիազարու , զայրացաւ յոյժ , և ելեալ յԵրուսաղէմէ չոքաւ 'ի Կոստանդնուպօլիս ։ Ի նոյն աւուրս 'ի 5 Սեպտեմբերի Նստաւ Եպարքոս անուանին Բէօպրիւլիւ Մէհէմմէտ Փաշայ , մատեան առ նա Յոյնք մեծամեծ պատարագօք ։ Սահմանեցաւ առանձին ժողովով վճարել զգործն , և եղեւ պատուէր երկուց ազգաց , 'ի ժամանակեալ աւուրն յանդիման լինիլ մեծի ատենին 'ի Դուռն ։ Գնաց Պատրիարքն Յունաց իւրովքն հանդերձ · և Աստուածատուր Պատրիարք առաքեաց զփոխանորդս իւր , որք էին Աբրահամ, Ռուհիջան , Խոճա Դաւիթ և Խարաթան ։ Եւ եղեւ սկիզբն լինել դատաստանին , բողոք եբարձ Պատրիարքն Յունաց , և ակսաւ ամբաստան լինել զԱստուածատուր Պատրիարքէն Հայոց , առաջի արար զկարծեցեալ դաշնագիրն Օմարայ որդւոյ Խաթթապա , և զհրովարտակն Սէլիմայ և Սիւլէյմանայ և այլ թագաւորաց ։ և ցուցանէր զհովանդակ տեղիս եւ զվանօրայս իւրեանց , և յաւել եւս 'ի բանս իւր , վանք Ս · Յակոբայ լինել Վրաց · Հապէշք , Գպթիք և Ասորիք հետեւողք ազգին Յունաց , վանօրէից եւ ստացուածոց նոցին ժառանգորդ Պատրիարքն · ապա խնդրեաց կարճել զձեռս Պատրիարքին Հայոց յիրացն Հապեշաց ։ Յետ ընթեռնլոյ ատենակալաց զգրեանս զորս մատոյց Պատրիարքն Յունաց ։ Հարցին ցփոխանորդսն Հայոց թէ՝ զի՞նչ ունիցին պատասխանել վասն այդոցիկ իրաց ։ Իսկ նոքա գոլով արք անպիտանք և անտեղեակք գործոց Երուսաղէմի՝ թէպէտ և մատուցին գրեանս ինչ , այլ ոչ կարէին հաստատել զբանս գրոց , և ատեանն ոչ կամեցաւ ունկն մատուցանել նոցա , կեղծս և խաբեբայս համարելով զնոսա , եւ այս յաւէտ յակնարկութենէ մեծի Վէզիրին · և Հայք տրտմութեամբ դարձան յետս ։

Ապա գրեցաւ հրովարտակ առ դատաւորն եւ առ քաղաքապետն Երուսաղէմի , յոր ետուն գրել Յոյնք 'ի կարգս վանօրէից իւրեանց , զվանօրայս և զստացուածս Հապեշաց Գպթոց և Ասորւոց , զի մի հակառակեսցին վասն այնց Լատինք և Հայք · և վասն այսր սահմանեցին Յոյնք տալ ամ